

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Կատարողական վարույթը կասեցնելու մասին

17.08.2021թ.

ք. Երևան

Հարկադի կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Կենտրոն, Նորք-Մարաշ և Էրեբունի-Նուբարաշեն վարչական շրջանների բաժնի ավագ հարկադիր կատարող, արդարադատության ավագ լեյտենանտ Ա.Ամիրջանյանս՝ ուսումնասիրելով թիվ 07763996 կատարողական վարույթի նյութերը՝

ՊԱՐԶԵՑԻ

ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 17.12.2013թ. տրված թիվ ԵԿԴ/0605/02/13 կատարողական թերթի համաձայն պետք է Համլետ Հենրիկի Գևորգյանից հոգույր <<ՎՏԲ-Հայաստանբանկ>> ՓԲ ընկերության բռնագանձել 3.384.915 ՀՀ դրամ գումար և հաշվեգրվող տոկոսները, մինչև պարտավորությունների փաստացի կատարման օրը:

Բռնագանձումը տարածել ՈՎ 044 12 0242 պայմանագրով գրավի առարկա հանդիսացող իրերի վրա:

Պարտապանից բռնագանձել նաև բռնագանձման ենթակա գումարի 5 տոկոսը, որպես կատարողական գործողությունների կատարման ծախս:

Կատարողական վարույթով վճռի հարկադիր կատարման ընթացքում պարզվել է որ պարտապան Համլետ Հենրիկի Գևորգյանին սեփականության իրավունքով պատկանող գրավադրված գույքերը չեն բավարարում թիվ ԵԿԴ/0605/02/13 կատարողական թերթի պահանջը կատարելու համար:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ, 28,1 հոդվածով և 37-րդ հոդվածի 8-րդ կետով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Կասեցնել թիվ 07763996 կատարողական վարույթը 90-օրյա ժամկետով:

Առաջարկել պահանջարկի ուղիք և պարտապանին նրանցից որևէ մեկի նախաձեռնությամբ 90-օրյա ժամկետում սնանկության հայց ներկայացնել դատարան.

Սույն որոշումը երկու աշխատանքային օրվա ընթացքում հրապարակել www.azdarar.am ինտերնետային կայքում.

Որոշման պատճեն ուղարկել կողմերին:

Որոշումը կարող է բողոքարկվել վերադատության կարգով՝ որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից՝ երկամսյա ժամկետում կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:

Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

ԱՎԱԳ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱՎԱԳ ԼԵՅՏԵՆԱՆՏ

Ա.ԱՄԻՐՋԱՆՅԱՆ